# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «ԱՐԱՄԵ» ՍՊԸ-ի միջև 2025թ. օգոստոսի 5-ին կնքված N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾԶԲ-2025/9-1 ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** «08» 04 2026թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ***«ԱՐԱՄԵ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,*** մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1869-Ն որոշման առաջին կետի երկրորդ ենթակետի պահանջները, ՀՏԶՀ Ծրագրերի իրականացման և վերահսկողության վարչության զեկուցագիրը և Կողմերի միջև ***2025թ. օգոստոսի 5-ին կնքված «ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի բժշկական ամբուլատորիայի կառուցում» ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների*** պետական գնման N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾԶԲ-2025/9-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.5 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 4-րդ «ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ» բաժնի 4.1-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **7 037 374 (յոթ միլիոն երեսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունչորս)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից **1 237 374 (մեկ միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունչորս)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակապվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** արժեքը:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «ԱՐԱՄԵ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Աղոնց 6/169 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 08270782 |
| Հ/Հ՝ 900011061299 | Հ/հ՝ 1570008306443000 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ |
| Գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյան | Տնօրեն՝ Ա.Սարգսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |